ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1

ք. Երևան «25» IX 2020 թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս Լ. Քոչարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **միջոցառումների կազմակերպման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3,999,000 (երեք միլիոն ինը հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
Կառավարական տուն 3	ՀՀ, ք. Ստեփանավան, Գ.Նժդեհի 37
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011024230	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02507171	Հ/Հ 16033017291900
	ՀՎՀՀ 06955741
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«25» 12 2020թ. Կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951100/501	Ծխախոտի օգտագործման նախաձեռնության տարիք է համարվում դեռահասությունը, երբ երեխաները փորձում են դուրս գալ հասուն կյանք՝ նմանակելով մեծերի սովորությունները: Այն երեխաները, ովքեր սկսում են ծխել դեռահասության ժամանակահատվածում սովորաբար հետագայում վերածվում են կանոնավոր ծխողների: Ելնելով վերոնշյալից Առողջապահության նախարարությունը (ԱՆ) մեկնարկում է հակածխախոտային արշավ, որի հիմնական թիրախը դեռահասները և երիտասարդներն են: Արշավի նպատակն է իրականացնել ինտերակտիվ միջոցառում, որը կգրավի երիտասարդների ուշադրությունը և որին կմասնակցեն այս թիրախային խնբի համար դերային մոդել հանդիսացող հայտնի մարդիկ: Ֆլեշմոբը նախատեսվում է կազմակերպել Ազգային հակածխախոտային օրվա կապակցությամբ (2020թ-ի հոկտեմբերի12-ին) Երևան քաղաքի տարբեր համայքներում, որի միջոցով նախատեսվում է փոխել ծխախոտին վերագրած «տղամարդ, նորաձև, վայելուչ» մոդելը և առաջարկել այլընտրանք այդպիսին լինելու: Ծառայությունը ներառում է հետևյալ բաղադրիչները. ***<u>Երաժշտության մշակում</u>*** 1. Երաժշտության ոճը պետք է ընտրել՝ ելնելով դեռահասների և երիտասարդների նախասիրությունից: Այն պետք է հոգեհարազատ լինի հատկապես այս տարիքային խմբին: 2. Երաժշտությունը պետք է լինի ռիթմիկ, հիշվող, առանց մելանխոլիայի նոտաների, ընդհակառակը՝ արթնացնի ինքնավստահության և լավատեսության զգացմունք: 3. Կատարողը պետք է իրականացնի երաժշտության օֆլայն գնահատում պատահականության սկզբունքով, նշված տարիքային խմբի շրջանակում և արդյունքները տրամադրի Պատվիրատուին:	դրամ	3,999,000	1	ք. Երևան Կառավարության թիվ 3 շենք	

		Խոսքերի մշակում 1. Խոսքերը պետք է արտահայտեն ԱՆ հակածխախոտային գաղափարախոսությունը՝ թիրախային խմբի համար ընդունելի ոճով: Այն պետք է գրված լինի կրեատիվ, հումորով, բառերը լինեն պարզ և հիշվող: 2. Խոսքերը պետք է լինեն կպչուն, այնպես որ օրվա ընթացքում արթնանան հիշողության մեջ: 3. Խոսքերի միջոցով պետք է խթանել հակածխախոտային կարգախոսը: ***Պարային ֆլեշմոբի մշակում*** 1. Պարային ֆլեշմոբում Կատարողը պետք է ապահովի թիրախային խմբի համար դերային մոդել հանդիսացող հայտնի մարդկանց մասնակցությունը: Պարտադիր է ընդգրկել սպորտի բնագավառի ազդեցիկ մարդկանց, ցանկալի է ընդգրկել դերասանների, երգիչների, հումորային շոումենների: 2. Ֆլեշմոբի համար մշակել բրենդային պարային կարճ շարժում, որը հեշտ կլինի կրկնել: Այն պետք է ասոցիացվի մշակված կարգախոսի հետ: 3. Բրենդային շարժումը առնվազն երեք անգամ պետք է կրկնվի երգի ողջ ընթացքում: ***Տեսահոլովակի մշակում*** 1. Տեսահոլովակում պետք է ապահովել դերային մոդելների մասնակցություն: 2. Ապահովել դերային մոդելների կողմից կարգախոսի արտաբերումը, ինչպես նաև բրենդային շարժման կրկնությունը տեսահոլովակի ընթացքում: 3. Աջակցել արդեն իսկ պատրաստի տեսահոլովակի տարածմանը սոցիալական ցանցերում: 4. Տեսահոլովակի տևողությունը առնվազն 2 րոպե: ***Միջոցառման կազմակերպում*** Ազգային հակածխախոտային օրվա կապակցությամբ կազմակերպել միջոցառումներ Երևան քաղաքի կենտրոնում և առնվազն 5 համայնքներում, որի ընթացքում կցուցադրվի պարային ֆլեշմոբը երիտասարդների մասնակցությամբ: 1. Կատարողն ապահովում է դերային մոդելների մասնակցությունը՝ առնվազն մեկական մոդել յուրաքանչյուր համայնքում: 2. Միջոցառման ընթացքում պարողներին Կատարողն ապահովում է հակածխախոտային գլխարկներով, որոնց վրա գրված կլինի հակածխախոտային արշավի կարգախոսը: 3. Ֆլեշմոբի իրականացումից հետո բաժանել դիտորդներին գլխարկներ՝ նույն					

		կարգախոսով: 4. Միջոցառման ընթացքում պահպանել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման անվտանգության կանոնները կանոնները՝ կրել դիմակներ և պահպանել սոցիալական հեռավորություն և այլն: **Կատարողը Պատվիրատուին հանձնում է միջոցառման վերջնական ծրագիրը՝ պայմանագիրը կնքելու պահից 20 օրացույցային օրվա ընթացքում՝ ոչ ուշ, քան 2020թ.-ի հոկտեմբերի 12-ը (միջոցառումն իրականացվում է 2020թ-ի հոկտեմբերի 12-ին): Իրականացնել շարունակական վերանայման աշխատանքներ և վերջնական տարբերակի համաձայնեցում Պատվիրատուի հետ: Կատարողը Պատվիրատուին է հանձնում վերջնական մշակված տեսահոլովակը՝ էլեկտրոնային կրիչով, մինչև 2020թ-ի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ:**					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011024230
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ.Նժդեհի 37

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033017291900
ՀՎՀՀ 06955741

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« »_____ 20 թ. Կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/501	Միջոցառումների հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024230
ՀՎՀՀ 02507171

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԵՑՅՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ.Նժդեհի 37

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033017291900
ՀՎՀՀ 06955741

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 25.09.20թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» «Մարտ» 2021թ.

1. Առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր բարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գրիգորյանի մի կողմից, և «Պեցցո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 25.09.20թ. կնքված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի Հավելված 1-ում՝ «Գնման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի: Ինչպես նաև «Տեխնիկական բնութագրում» կատարել միջոցառման անցկացման օրվա փոփոխություն՝ «Ազգային հակածխախոտային օրվա կապակցությամբ (2020թ-ի հոկտեմբերի 12-ին)» բառերը փոխարինել «Միջազգային հակածխախոտային օրվա կապակցությամբ (2021թ-ի մայիսի 31-ին)»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ում՝ «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 2-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն	«Պեցցո» ՍՊԸ
Կառավարական տուն 3	Ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԿՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024230	Հ/Հ 160330017291900
ՀԿՀՀ 02507171	ՀԿՀՀ 06955741
/ստորագրություն/	/ստորագրություն/
Վ.Գ.	Կ.Գ.

Հավելված N 1
«25» Սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1 ծածկագրով պայմանագրի
Հավելված N 1
«19» 03 2021թ. Կնքված թիվ 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951100/2	Ծխախոտի օգտագործման նախաձեռնության տարիք է համարվում դեռահասությունը, երբ երեխաները փորձում են դուրս գալ հասուն կյանք՝ նմանակելով մեծերի սովորությունները: Այն երեխաները, ովքեր սկսում են ծխել դեռահասության ժամանակահատվածում սովորաբար հետագայում վերածվում են կանոնավոր ծխողների: Ելնելով վերոնշյալից Առողջապահության նախարարությունը (ԱՆ) մեկնարկում է հակածխախոտային արշավ, որի հիմնական թիրախը դեռահասները և երիտասարդներն են: Արշավի նպատակն է իրականացնել ինտերակտիվ միջոցառում, որը կգրավի երիտասարդների ուշադրությունը և որին նմանանցեն այս թիրախային խնբի համար դերային մոդել հանդիսացող հայտնի մարդիկ: Տլեշմոբը նախատեսվում է կազմակերպել Միջազգային հակածխախոտային օրվա (2021թ. մայիսի 31-ին) կապակցությամբ Երևան քաղաքի տարբեր համայքներում, որի միջոցով նախատեսվում է փոխել ծխախոտին վերագրած «տղամարդ, նորաձև, վայելուչ» մոդելը և առաջարկել այլընտրանք այդպիսին լինելու: Ծառայությունը ներառում է հետևյալ բաղադրիչները. ***Երաժշտության մշակում*** 1. Երաժշտության ոճը պետք է ընտրել՝ ելնելով դեռահասների և երիտասարդների նախասիրությունից: Այն պետք է հոգեհարազատ լինի հատկապես այս տարիքային խմբին: 2. Երաժշտությունը պետք է լինի դիթմիկ, հիշվող, առանց մելանխոլիայի նոտաների, ընդհակառակը՝ արթնացնի ինքնավստահության և լավատեսության զգացմունք: 3. Կատարողը պետք է իրականացնի երաժշտության օֆլայն գնահատում ատատահականության սկզբունքով, նշված տարիքային խմբի շրջանակում և	դրամ	3,999,000	1	ք. Երևան Կառավարության թիվ 3 շենք	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև 20.12.2021թ.:

		արդյունքները տրամադրի Պատվիրատուին: ***<u>Խոսքերի մշակում</u>*** 1. Խոսքերը պետք է արտահայտեն ԱՆ հանածխախոտային գաղտնարախոսությունը՝ թիրախային խմբի համար ընդունելի ոճով: Այն պետք է գրված լինի կրեատիվ, հումորով, բառերը լինեն պարզ և հիշվող: 2. Խոսքերը պետք է լինեն կայուն, այնպես որ օրվա ընթացքում արթնանան հիշողության մեջ: 3. Խոսքերի միջոցով պետք է խթանել հակածխախոտային կարգախոսը: ***<u>Պարային ֆլեշմոբի մշակում</u>*** 1. Պարային ֆլեշմոբում Կատարողը պետք է ապահովի թիրախային խմբի համար դերային մոդել հանդիսացող հայտնի մարդկանց մասնակցությունը: Պարտադիր է ընդգրկել սպորտի բնագավառի ազդեցիկ մարդկանց, ցանկալի է ընդգրկել դերասանների, երգիչների, հումորային շոումենների: 2. Ֆլեշմոբի համար մշակել բրենդային պարային կարճ շարժում, որը հեշտ կլինի կրկնել: Այն պետք է ասոցիացվի մշակված կարգախոսի հետ: 3. Բրենդային շարժումը առնվազն երեք անգամ պետք է կրկնվի երգի ողջ ընթացքում: ***<u>Տեսահոլովակի մշակում</u>*** 1. Տեսահոլովակում պետք է ապահովել դերային մոդելների մասնակցություն: 2. Ապահովել դերային մոդելների կողմից կարգախոսի արտաբերումը, ինչպես նաև բրենդային շարժման կրկնությունը տեսահոլովակի ընթացքում: 3. Աջանցել արդեն իսկ պատրաստի տեսահոլովակի տարածմանը սոցիալական ցանցերում: 4. Տեսահոլովակի տևողությունը առնվազն 2 րոպե: ***<u>Միջոցառման կազմակերպում</u>*** Ազգային հանածխախոտային օրվա կապակցությամբ կազմակերպել միջոցառումներ Երևան քաղաքի կենտրոնում և առնվազն 5 համայնքներում, որի ընթացքում սցենարդրվի պարային ֆլեշմոբը երիտասարդների մասնակցությամբ: 1. Կատարողն ապահովում է դերային մոդելների մասնակցությունը՝ առնվազն մեկական մոդել յուրաքանչյուր համայնքում: 2. Միջոցառման ընթացքում մասնակիցներին Կատարողն ապահովում է հանածխախոտային գլխարկներով, որոնց վրա գրված կլինի հանածխախոտային առշաղ նարգախոսը: 3. Ֆլեշմոբի իրականացումից հետո բաժանել դիտորդներին գլխարկներ՝ նույն նարգախոսով: 4. Միջոցառման ընթացքում պահպանել կորոնավիրուսային հիվանդության (COVID-					

		19) տարածման ապահովագրման անվտանգության կանոնները նանոնները՝ տալ դիմակներ և ատրանել սոցիալական հեռավորություն և այլն: **Կատարողը Պատվիրատուին հանձնում է միջոցառման վերջնական ծրագիրը՝ պայմանագիրը կնքելու պահից ոչ ուշ, քան 2021թ.-ի հունիս ամիսը՝ մայիսի 31-ին: Իրականացնել շարունակական վերանայման աշխատանքներ և վերջնական տարբերակի համաձայնեցում Պատվիրատուի հետ: Կատարողը Պատվիրատուին է հանձնում վերջնական մշակված տեսահոլովակը՝ էլեկտրոնային կրիչով, մինչև 2021 թ-ի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ:**					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024230
ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Պեցցո» ՍՊԸ
Ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

Հ/Հ 160330017291900
ՀՎՀՀ 06955741

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«14» Սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/24-1 ծածկագրով պայմանագրի
Հավելված N 2
«19» 03 2021թ. Կնքված թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/2	Միջոցառումների հետ կապված ծառայություններ	-	-	-	3,999,000	3,999,000	3,999,000	3,999,000	3,999,000	3,999,000	**3,999,000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024230
ՀՎՀՀ 02507171

L.S.

ԿԱՏԱՐՈՂ
«Պեցցո» ՍՊԸ
Ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

Հ/Հ 160330017291900
ՀՎՀՀ 06955741

(անվանումը)

L.S.